Ռոբերտ Զավենի Բաբլոյան

Համառոտ կենսագրություն

Ռոբերտ Բաբլոյանը ծնվել է 1935թ. մայիսի 14-ին Երեւան քաղաքում: Տարրական դպրոցի չորրորդ դասարանն ավարտելուց հետո Հայաստանից տեղափոխվել է Մոսկվա, որտեղ եւ ավարտել միջնակարգ դպրոցը, երեք տարի ծառայել բանակում, այնուհետեւ ընդունվել եւ 1964թ. ավարտել Համալսարանի Լեզվաբանական ֆակուլտետը:

Ռոբերտ Բաբլոյանի ստեղծագործական կենսագրության հիմքը դրվել է բանակում, երբ նրա հոդվածներն սկսվեցին տպագրվել բանակային լրագրերում: Այնուհետեւ նա աշխատել է որպես հայկական «Ավանգարդ» թերթի թղթակից Մոսկվայում: Նա հայ երիտասարդ գրողների մրցույթի հաղթող է ճանաչվել:

1969թ.-ից 1974թ.-ը Ռոբերտը վերադարձել է Հայաստան, որտեղ ծառայել է որպես Մամուլի կոմիտեի ղեկավարի տեղակալ եւ այնուհետեւ աշխատել «Սովետական գրող» հրատարակչությունում: Նրա առաջին գիրքը տպագրվել է 1970թ. Երեւանում:

1975-1983թթ. Ռոբերտը ղեկավարել է «Պիոներ» ամսագրի Գրականության եւ մշակույթի բաժինը: Հետագայում նաեւ աշխատել է Մոսկվայի «Ռադուգա», «Մալիշ» եւ «Պրոֆիզդատ» հրատարակչություններում: Ներկայում շուրջ քսան տպագիր գրքերի հեղինակ է: Նրա գրքերը հիմնականում ռուսերեն եւ հայերեն լեզվով են, սակայն նաեւ թարգմանվել են ճապոներեն, ուզբեկերեն, աղրբեջաներեն եւ այլ լեզուներով:

Ռոբերտ Բաբլոյանը Ռուսաստանի Ժուռնալիստների միության եւ Գրողների միության անդամ է, ինչպես նաեւ՝ Հայաստանի Գրողների միության պատվավոր անդամ: Ոչ վաղ անցյալում աշխատել է որպես «Նոյեվ կովչեգ» /Նոյյան տապան/ լրագրի գլխավոր խմբագրի տեղակալ: Այժմ միջնակարգ դպրոցում դասավանդում է Համաշխարհային մշակույթի պատմություն:

Ռոբերտը մի շարք պարգեւների եւ մրցանակների է արժանացել, ինչպես նաեւ Ազգերի միության միջազգային ակադեմիայի անդամ է:

Ռոբերտն այժմ կնոջ՝ Տատյանայի հետ բնակվում է Մոսկվայում: Ունի երկու զավակ: Որդին՝ Զավենը /36տ./ բնակվում է Ուկրաինայում, իսկ դուստր Արփինեն /26տ./՝ Մասաչուսեթս նահանգի Բոստոն քաղաքում: Երկու զավակներն էլ գրականության սիրահար են եւ ժամանակ առ ժամանակ ստեղծագործում են:

Բոստոն, Մասաչուսեթս
10/01/07